

քաջանաներից մի ընկեր--բէ--ն, որին անդամակցէին և ժողովրդականներէն ցանկացողները: Սորա արդեանց գլխաւոր աղբիւրը լինէին Կաթնաբեր կամ իւրեանց եկեղեցական արդեանց յայտնի Կաթնաբեր և կամ տարեկան որոշեալ անդամակցական վճարը: Նոյնպէս և զանազան կողմնակի եկամուտներն ու նուիրարեութիւնները: Այս ընկերութեան պարտականութիւնն ու նպատակը լինէր իւր նիւթական միջոցներով ապահովել քաջանայից այրիացեալ ընտանեաց խղճալի վիճակը և իւր հսկողութեամբ հոգ տանել նոցա զաւակաց բարոյական և մտաւոր կրթութեանն ու դաստիարակութեանը:

Այս մեծ բարեգործութիւն կրնէր արդարեւ, և այս մեծ բարեգործութեան անդրանիկ փառքն ու պատիւը պահած է այն քաջանայից որոնք առաջին անգամ կձեռնարկեն կազմել մի այս տեսակ ընկերութիւն, խմբագրել կանոններ և առաջարկել: Նորին Ահհափառութեան ի հաստատութիւն, և ուրախութեամբ կաւետեմք որ արդէն Աստրախանու վիճակի եկեղեցականները թէ ցաւագարեալ եկեղեցականաց և թէ քաջանայից այրիացեալ ընտանեաց հոգ տանող անուամբ կազմած են մի ընկերութիւն Ահհափառութիւն: Հայրապետի հրամանով հաստատուած յատուկ կանոնադրութեամբ, որը ահա կհրատարակեմք ի գիտութիւն Ազգայնոց և յօրինակ նշնանակ ընկերութիւն կազմել ցանկացողաց:

ԿԱՆՈՆԵՐ ԳՐԱԹԻՒՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒ ԳՐԱԶԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԵՐ ԵՒ ԵՂԵՐԴԱՆԵՐ ԱՊՐԵՒԵՆԱՅ ՀԱՅՈՑ ՎԵՃԻՔԻ յԵՐԵՒԵՒ ԵՒ ԵՂԵՐԴԱՆԵՐ ՆԵՆԵՔԻՆՈՅ ԸՄ ԿՐԹԻՐԵՐԵՐԵՒՆ ՎԵՃԻՔԻՆ ՀԻՔԵՐ ԻՆԻՆԵՐԵՆ:

Ի ո ս Հոկտեմբերի 1880 ամի:

4. Նպատատու Գանձարանն սահմանի յաղագս հասուցանելոյ զօգնութիւն քահանայից եւ ստորին եկեղեցականաց, մասնակցողաց Գանձարանին, երբ զաղարեն նորա ի պաշտօնավարութենէ, եւ զերդաստանացն՝ զկնի վախճանի նոցա:

2. Բոլոր քահանայք եւ ստորին եկեղեցական պաշտօնեայք, որք զտանին ի պաշտօնավարութեան, պարտաւոր են մասնակցել նպատատու Գանձարանին:

5. Նպատատու Գանձարանն բաղկանայ. նախ՝ ի տարեկան տրոց եկեղեցական զատու Աստրախանայ Հայոց վիճակի. երկրորդ՝ ի տարեկան տրոց զքահանապետ եկեղեցեաց նոյն վիճակի. երրորդ՝ ի միանուագ պատահական տրոց եկեղեցականաց: չորրորդ՝ յեկամուտ նուիրանաց բարեպաշտից:

4. Տարեկան տուրք յեկեղեցականաց վասն բաղկացումեան Գանձարանի բաժան յերկու կարգս.

ա. Կարգ. Տասն եւ ճինդ բուրլի

45 ր.

բ. Կարգ. Տասն բուրլի

10 ր.

գ. Կարգ. Հինգ բուրլի

5 ր.

ցակ բոլոր մասնակցողաց նպաստատու Գանձարանին, վաւերացուցեալ եւ կնքեալ ի վիճակաւոր Առաջնորդէ, յայսմ նշանակին առանձին խորանս՝

— Ժամանակ մտանելոյ իւրաքանչիւր անձին ի կարգ մասնակցողաց.

բ. կարգ վճարից.

գ. Տեղի պաշտօնավարութեան եւ

դ. ժամանակ թողոյ զմասնակցութիւն Գանձարանի:

19. Վասն զրիւոյ զմուտս եւ զծախս զումարաց նպաստատու Գանձարանի յիւրաքանչիւր ամի յաժտեանն Գեկտեմբերի տուեալ լինի ի վիճակաւոր Առաջնորդէ վաւերացուցեալ եւ կնքեալ մատենան, որպիսին յետ անցանելոց տարւոյն, թուուղեալ լինի ի ժողովոյ եկեղեցականաց, իսկ զկնի անցանելոյ երից ամաց ընդ օրագրութեանց եւ վկայաթղթոց յանձնին ի պահպանութիւն Գիւանի անդակոսն կոնսիստորիայի:

20. Քննութիւն զրամական հաշուոյ Գանձարանի, հաւասարապէս եւ բոլոր եղբակացութիւնք կառավարութեան վասն նշանակելոյ եւ կարճելոյ զօժանդակութիւնս կատարին ի ձեռն ընդհանուր ժողովոյ եկեղեցականաց, եւ հետեւանք նոցին, ընդ հաշուոյ հրատարակին յէջս «Արարատ» ամսագրոյ:

21. Ըստ կարգադրութեան վիճակաւոր Առաջնորդի ի ձեռն նշանակեալ ի նմանէ անձանց լինի տարաժամ ստուգութիւն զումարաց Գանձարանի, յանակընկալ միջոցի, ոչ պակաս քան զերկուս նուազս ի տարին:

22. Բարեկարգիչք եւ այլ Գործակալ անձինք, յայտնելով վիճակային Իշխանութեան զվախճանէ որ եւ իցէ եկեղեցականի, ի մի եւ նոյն ժամանակի պարտաւոր են հաղորդել եւ կառավարութեան Գանձարանի, բացատրելով զթւոյ մնացելոց ի զերդաստանի վախճանելոյն, նշանակութեամբ ամաց հասակի իւրաքանչիւր ումեք. ի հաստատութիւն վերջնոյն պարտին առաջարկել մետրիկական քաղուածք զժամանակէ եւ զտեղոյ ծննդեան եւ մկրտութեան իւրաքանչիւրոցն առանձին:

23. Ի ղէպս դադարելոյ ի քահանայապետութենէ ի պատճառս ձերութեան, վիճակային Կոնսիստորիայն հաղորդէ զայնմանէ ի տեղեկութիւն կառավարութեան Գանձարանի:

24. Գանձարանն սահմանի ընդ Հոգաբարձութեամբ որրոց եւ այրեաց Հոգեւորականաց, եւ զործադրէ ի թուղթս իւր զկնիւք Հոգաբարձութեան, պահպանելով ըզզումարս ի զրամարկեղ Մարքուսական Գանձարանի:

25. Իւրաքանչիւր փոփոխութիւնք, յաւելուածք եւ բացատրութիւնք այսր Կանոնադրութեան ըստ պահանջման փորձոյ եւ ժամանակի առաջարկին միշտ ի քննութիւն եւ ի հաստատութիւն Նորին Վեհափառութեան Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց:

Նոսրին կարգու վճարեն եւ եկեղեցիք վիճակին, նայելով նիւթական միջոցաց նոյրին:

5 Ի Հոգեւորական դասու ըստ առաջին կարգի պարտաւոր են վճարել Աւագ Քահանայք եւ Քահանայք ըստ, երկրորդ կարգի՝ Սարկաւաղունք եւ ըստ երրորդ կարգի՝ Հորս աստիճանաւոր զպիրք: Իսկ պատահական միանուազ տուրք յեկեղեցականաց որոշին հետեւեալ կարգաւ. յամուսնացող զպրաց 4 րուրի, վասն մկրտութեան զաւակաց եկեղեցականաց—4 ր. վասն աստիճանի զպրութեան 2 ր. Սարկաւաղութեան 5 ր. Քահանայութեան 40 ր. վասն պարգեւատրութեանց փրօնի 5 ր. Լանջական խաչի 5 ր. Վամիլաֆկայի 5 ր. յեկեղեցականաց նշանակելոյ ի տօնավճառն Նիմայի՝ ի քահանայից—40 ր. իսկ ի Սարկաւաղաց եւ ի Գպրաց 5 ր

6 Տուրք անդամոց Վանձարանի պարտին շարունակել յընթացս բոլոր պաշտօնավարութեան, նոյնպէս եւ վճարք յեկեղեցեաց վասն նոցա պարտին տեւել անխափան ի վերոյիշեալ ժամանակամիջոցի:

7. Տուրք յԱնդամոց Վանձարանի նոյնպէս եւ յեկեղեցեաց ընկալեալ լինին եւ առաջարկին կառավարութեան Վանձարանի ի ձեռն տեղական բարեկարգաց, անշուշտ ի Գեկտեմբեր ամսոց իւրաքանչիւր ամի իսկ վճարողք յամսեանն Յունվարի եւ կամ զլինի քանի մի ամսոց, պարտաւոր են հասուցանել եւ առկոսիս վասն անցեալ ժամանակամիջոցի:

8. Նուիրաբերութիւնք ի մասնաւոր անձանց եւ կամ ի նոյն իսկ Անդամոց Վանձարանի բարդին ի վերայ զրամադիտոյ եւ շահաբերին, որպէս եւ նոյն իսկ զրամադրութեան, լուծարեալ զրամատոմսակօք: որք առաւել օգտաւէտ համարին ի նոյն ժամանակի, վասն բոլոր նուիրաբերութեանց հրատարակի «յԱրարատ» ամսագրի:

9. Տուրք վճարեալք Նպաստատու զանձարանին ոչ երբէք վերադարձուցանին նպաստողաց. եւ եթէ որ յԱնդամոց յընթացս միոյ կամ աւելի ամաց ընդհատէ զվճարումն տրոց ըստ յարգելի իմն պատճառանաց, պարտաւոր է նա վճարել յապագայի զբոլոր զումարն նանդերձ տոկոսեօք վասն ընդհատեալ ամաց. իսկ ի հակառակ դէպս կորուսանէ նա, որպէս եւ զերգաստան նորա, զիրաւունս ստանալոյ օգնութիւն ի նպաստատու Վանձարանէն:

10 Բաժանումն նպաստոց Վանձարանի նշանակի յիւրաքանչիւր վեցամեակի — Յունիս եւ Գեկտեմբեր ամիսս, վասն անցեալ կիսատարւոյ ի ձեռն տեղական բարեկարգի համաձայն կարգադրութեան, որ հաստատի ի Բեմակալ Առաջնորդէ:

11 0ժանդակութիւն Անդամոց Վանձարանի, ըստ Թուոյ ամաց յընթացս որոց իւրաքանչիւր որ յԱնդամոց վճարեալ է զտուրս, մատակարարին համաձայն ներքոյգրեալ աղիւսակի հետեւեալ որքանութեամբ զլինի միոյ վճարեալ ամի ստացեալ լինի նպաստ կրկնապատիկ աւելի քան զտարեկան տուրս, այսինքն ըստ առաջին կարգի 50 ր. ըստ երկրորդ կարգի 20 ր. եւ ըստ երրորդ կարգի 40 ր. իսկ ի հետեւեալ ամս յստեկեալ լինի յիւրաքանչիւր ամի ի վերայ 50 րուրեաց 15%, նոյնպէս ր վերայ նպաստից երկրորդ եւ երրորդ կարգի:

Ծանօթութիւն. Կառավարութիւն նպաստատու Վանձարանի զլինի անցանելոյ ա-

ուղին տասնամիկի կարէ փոխանակ $15^{\circ}/_{10}$ վարել զքան եւ աւելի տոկոսիս, միտ զնկով զարգացման գրամադիտոյ Գանձարանի:

ԱՂԻՍԱԿ

Որհանութեան նպաստի ըստ թոյլ վճարեալ տնայ, համաձայն երկից կարգաց:

Վճարելի միջոց	Ա. կարգ			Բ. կարգ			Գ. կարգ			Դ. կարգ		
	Բուքելի կ.			Բուքելի կ.			Բուքելի կ.			Բուքելի կ.		
1	''	''	''	''	''	''	19	106	50	71	''	35 50
2	30	''	''	20	''	10	20	111	''	74	''	37 ''
3	34	50	''	23	''	11	50	21	115	50	77	'' 38 50
4	39	''	''	26	''	13	''	22	120	''	80	'' 40 ''
5	43	50	''	29	''	14	50	23	124	50	83	'' 41 50
6	48	''	''	32	''	16	''	24	129	''	86	'' 43 ''
7	52	50	''	35	''	17	50	25	133	50	89	'' 44 50
8	57	''	''	38	''	19	''	26	138	''	92	'' 46 ''
9	61	50	''	41	''	20	50	27	142	50	95	'' 47 50
10	66	''	''	44	''	22	''	28	147	''	98	'' 49 ''
11	70	50	''	47	''	23	50	29	151	50	101	'' 50 50
12	75	''	''	50	''	25	''	30	155	''	104	'' 52 ''
13	79	50	''	53	''	26	50	31	160	50	107	'' 53 50
14	84	''	''	56	''	28	''	32	165	''	110	'' 55 ''
15	88	50	''	59	''	29	50	33	169	50	113	'' 56 50
16	93	''	''	62	''	31	''	34	174	''	116	'' 58 ''
17	97	50	''	65	''	32	50	35	178	50	119	'' 59 50
18	102	''	''	68	''	34	''	36	183	''	122	'' 61 ''

12. Նպաստատու Գանձարանն ի դէպս աճելոյ եւ նուազելոյ թուոյ թոշակաւ տուաց, ունի իրաւունս յաւելիլ եւ նուազեցումնով զորքանութիւն օժանդակութեան թոշակաւուաց իւրաքանչիւր կարդի, համաձայն նիւթական միջոցաց Գանձարանի, քայց այնու միայն, զի յիւրաքանչիւրում նուազի կանխապէս, ըստ զօրութեան 25 յօդ. ոոյն կարգադրութեան, խնդրեսցի լուծումն Ծայրագոյն Հոգեւոր Իշխանութեան միջնորդութեամբ Վիճակաւոր Առաջնորդի:

15. Զիրաւունս ստանալոյ օժանդակութիւն յիշեալ որքանութեամբ վայելին հետեւեալ անձինք. 1. Քահանայք եւ սուրին եկեղեցական պաշտօնեայք, որք մասնակցեալ են Գանձարանին՝ վճարելով զտուրս զինի զաղարելոյ ի պաշտօնավարութենէ պատճառաւ տկարութեան կամ ծերութեան. նոյնպէս եւ զերգաստամբ այնոցիկ անձանց, որք զատաստանական վճռով զրկուալ են ի պաշտամանց, քայց մնան ի Հոգեւոր կոչման: Ծերացեալ կամ տկար Քահանայք, որք զաղարին ի քահանայապետութենէ անօրէնութեամբ վիճակաւոր Առաջնորդի համաձայն բարեխնամ անօրէնութեան եւ կանոնական Կոնգրէի Տ. Տ. Գէորգայ Դ-ի, Սրբազնակաւոր Կաթողիկոսի ամենայն Հայոց, ստանան զերիս մասունս յարդեանց, որք ըզխին ի հսկ-

ւում ենէ՝ ծխականաց նոցա ի ձեռն օղևականաց. անկախ յայսմանէ՝ կարեն ստանալ զօղևութիւն եւ ի նպատատու Գանձարանէն ըստ սահմանեալ կարգի, որովհետեւ երեք մասունք արդեանց համարի վասն նոցա միջոց ապրուստի եւ վարձ սակս բազմամեայ պաշտօնավարութեան իւրեանց, իսկ ի վերայ նպատից Գանձարանի ունին իրաւունս ըստ վճարեալ արօց խրեանց, նոյնպէս եւ յեկեղեցական դամարաց վասն նոցա՝ համաձայն թուոյ վճարեալ ամաց։ 2. Այլի երիցականայք, ամուսինք որոց վճարեալ են Գանձարանին զտուրս, թէեւ մեռեալ իցեն ի ներքոյ դատաստանի. որքունք նոցա, արական սեռի մինչեւ ցլրումն 17 ամաց, իսկ տկարքն մինչեւ ցմահ, իգական սեռի մինչեւ ցամուսնութիւն. իսկ չամուսնացեալքն մինչեւ ցմահ։

14. Օժանդակութիւն յիշեալ չափով տուեալ լինի անմիջապէս նոյն իսկ վճարողաց, այրեաց նոցա եւ չափահաս որքոց երկուց սեռից, իսկ հասոյթք անչափահասից, որք գտանին ընդ Հոգարարծութեամբ, յանձնին հոգարարծուաց նոցա, որք յւերաքանչիւր ամի պարտաւոր են մատուցանել զհաշիւ Հոգարարծութեան որքոց եւ այրեաց Հոգեւորականաց։ Որքունք երկուց սեռից, եթէ ի միում զերդաստանի գտանին երկու կամ աւելի անձինք, ստանան զօժանդակութիւն հաւասար չափով, իսկ եթէ մի անձն—ստանայ զամբողջ թոշակն։

15. Տուչութիւն օժանդակութեանց՝ ըստ 12 յօդուածոյ, սահմանեալ քանակութեամբ, պարտի սկսանիլ յետ անցանելոյ երկուց ամաց զինի հաստատման նպատատու Գանձարանի, յընթացս առաջին ամի մուծանին ի ցուցակ նպատատուաց անուանք այնոցիկ անձանց, որք ունին իրաւունս ստանալոյ զօժանդակութիւն։

16. Ստացումն օժանդակութեան ի նպատատու Գանձարանէ չկարէ զրկել եւ ոչ դար ի մասնակցողաց ի նմին. քաղիլ զօգուտ յիրաւանց ընդհանուր Օրինաց եւ Կարգադրութեանց Տէրութեան, եւ յամենայն արտօնութեանց, որովք սահմանեալ են թոշակք, օժանդակութիւնք եւ սննդադրամք ի ստացումն, եւ որք համարին սեպհականութիւնք նոցա, իբրեւ ներգործական ծառայողաց ի թաղաւորական եւ յեկեղեցական պաշտամունս. որովհետեւ նպատք Գանձարանի ոչ համարին ողորմութիւնք կախեալք ի բարեյօժար կամաց տուողաց, այլ իբրեւ պարտաւորեալ ստանալիք, յորոյ վերայ իւրաքանչիւր որ ի մասնակցող Անդամոց համաձայն վճարեալ ամաց եւ կարգի, ունի արդար իրաւունս, իբրեւ ի վերայ բնիկ սեպհականութեան իւրոյ, չնայելով ի կարօտ կամ յանկարօտ դրութիւն ստացողի։

17. Կառավարութիւն նպատատու Գանձարանի բաղկանայ յերից Անդամոց, ի Գանձապահէ եւ ի Գործավարէ։ Առաջին չորքն ընտրին ի քահանայից Աստրախանայ, իսկ վերջինն ի Սարկաւազաց կամ ի չորս աստիճանաւոր դպրաց, ունելով ամենեցուն զփոխանորդս, ընտրութիւնն լինի քուէարկութեամբ՝ յընդհանուր ժողովոյ եկեղեցականաց. մինն յԱնդամոց ըստ ընտրութեան ընկերակցացն համարի նախադահ կառավարութեան։ Անդամքն, որպէս եւ զանձապետն եւ զործավարն եւ փոխանորդ նոցին, հաստատին ի պաշտամունս եւ արձակին ի նոցունց, տնօրէնութեամբ վիճակաւոր Առաջնորդի. ժամանակամիջոց ծառայութեան սահմանի երեք ամ։

18. Գանձարանն պահպանէ զմիջոյն անուանական, ըստ կարգի այբուբենից, ցու-

ՅՈՒՅՈՒ

Աման մայր գումարի տոկոսը, հասնող մանկ և տղաների, պատահաբար համարանի տ-
նականացեալ եկեղեցականաց Աստուծոյ Հայոց վիճակի, յընթացս տալանական միջոցի.

Վճարելի ամիս ըստ կանոնաց	Միջանցիկ ժամերի համար	Միջանցիկ ժամերի համար	Միջանցիկ ժամերի համար	Միջանցիկ ժամերի համար	Միջանցիկ ժամերի համար	Միջանցիկ ժամերի համար	Միջանցիկ ժամերի համար
1	2400	2400	2400	2400	2400	2400	2400
2	2544	2400	4944	60	4884	293	5177
3	5177	2400	7577	129	7448	446	7894
4	7894	2400	10294	207	10087	605	10692
5	10692	2400	13092	294	12798	767	13565
6	13565	2400	15965	381	15584	935	16519
7	16519	2400	18919	477	18442	1106	19548
8	19548	2400	21948	582	21366	1281	22647
9	22647	2400	25047	696	24351	1461	25812
10	25812	2400	28212	819	27393	1643	29036

* *

Խմբագրութիւնն ախորժ հաճութեամբ ընկալաւ Փարիզի Հայկազեան Ու-
սումնասիրաց ընկերութիւնից ուշադրութեան արժանի հետաքայ գրութիւնը,
որով յիշեալ ընկերութեան նպատակը պարզելով՝ խնդրումէ շինայել
սոյն ազգագրութեան ընկերութեանը նիւթական օժանդակութիւն և բարոյական
աջակցութիւն՝ սորան իւր գործունէութեան ասպարիզում քաջակերելու և
իւր բարենպատակ փափագը արդիւնաւորելու համար։ Նպատակը մի այս-
պիսի բարենպատակ ընկերութեան հաստատութեանն ու յաջողութեանը և
այն՝ Փարիզի պէս Եւրոպական մայրաքաղաքում՝ նշանակումէ միջոց տալ
այդ ընկերութիւնը կազմող եռանկուն անձանց և երիտասարդներին ոչ
սակաւ ծառայութիւն մատուցանել Ազգին, որով անշուշտ կ'ընթանային
այն տեղում պանդխտող ուսումնաժարաւ ազգատ հայ ուսանողներին նե-
ղութիւնները։ Այն թանգարանում և ընթերցարանում, որոնք ինչ-
պէս խոստանումէ այդ ընկերութիւնը, արդէն ներկայ յունվարի 1 ից բա-
ցեա՞ծ պէտքէ լինին Փարիզի մէջ, այն տեղի հայ ուսանողները անհրա-
ժեշտ առթիւ կունենան յաճախակի մօտենալ միմեանց, ազգային խորհր-
դածութիւններով զբաղիլ և մայրենի լեզուի ընթերցասիրութեամբ պա-
րապլի, մինչդեռ առանց այդ ընթերցարանի ու մատենադարանի գուցէ ամ-
բողջ տարին գէթ միանգամ միմեանց հետ տեսակցելու կարիք զգացած չը-
լինէին։ Ահրջապէս ունենալով Փարիզի մէջ մի այդպիսի բարենպատակ
Հայկազեան ընկերութիւն, մէք մեր կողմից գործնականապէս ապացուցած կ'ը-
նինք Եւրոպայի առաջ թէ՛ արդարեւ կայ աշխարհիս երեսին մի բուն

Հայկական ժողովուրդ, որ ունի զարգացման ընդունակ իւր սեպհական հարուստ լիզուն (թէև առանց գորան էլ յայտնի է ամենին) և Ազգային Քրիստոնէական Առաքելական Եկեղեցին, ժողովուրդ, որ իւր բազմատեսակ մարդավայել առանձնայատկութիւններով արժանի և ընդունակ է ապրելու իբրև Ազգ ազգային իրաւունքներով:

Խմբագրութիւնս այս ընկերութեանը ցանկանումէ կատարեալ յաջողութիւն և քաջայոյս է, որ սա իւր գործունէութեան մասին մերթ ընդ մերթ ուրախալի տեղեկութիւններ հաղորդելով խմբագրութեանս՝ կուրախացնէ և Արարատի յարգոյ ընթերցողներին:

Առայժմ կարևոր կհամարեմք յիշեալ ընկերութեան գրութիւնից հետագայ մի քանի պարբերութիւնքը քաղել և մեր սիրելի Ազգայնոց քաղցր և լուրջ ուշադրութեանը յանձնել:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՈՒՍՈՒՄ ՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱԵՐԸ.

« Հայն զգալով վերջապէս այն սկզբուն ճշդութիւնն ու ճշմարտութիւնը թէ « ո՛վ որ օտարին վրայ կը խարսխէ իւր յոյսը, . . . արգահատանք միայն թող սպասէ անկէ . . . , իւր գոյութիւնն ի հիմանց արմատախել սպառնացող անտարբերութիւնը թօթափեց, փարատեց իւր մտաց աչերը սքողող ամպերը, ջախջախեց իւր կորովի բազուկները կաշկանդող կապերը, և աշխարհ աշխատողին բաժինն ըլլալուն համոզուելով իւր սեպհական ոյժովն ու հանճարովը իւր վերածնութեան հիմունքը դաստիարակութեան և զիտութեան անխախտելի և անհիւժական տարրերով հիւսել ձեռնարկեց:

Իցի՛ւ թէ դարևոր եղած լինէր այս արթնութիւնը:

Տայ՛ Երկինք՝ որ մշտատեւ լինի այս սթափումը:

« Իւր անձին և իւր ազգին բարեացակամ ամեն Հայ, պարտազանցութեան ծանր դատակնիքը իւր ճակտին վրայ չզրոշմելու և խիղճն յաւիտենական խայթի չմատնելու համար, թող պատրաստ են այս սրբազան և նուիրական պարտքն իւր բաժինը վճարելու:

« Իւր Ազգին և Հայրենեաց բարօրութեանը չաշխատող Հայը՝ Հայ անունը կրելու չէ արժանի »:

« Ներելի՞ էր մեզ . . . անտարբեր մնալ այս քրտնասարսուռ դատակնիքի առաջ, մեզ՝ որ օտարութեան և պանդխտութեան մէջ մեզ սպասող վտանգներն ու խօշնդոտները արհամարհելով՝ Ազգին մի օգտակար անդամը լինելու մտօք սլացած եմք յՆւրոպայ, անդ ուսումն և զիտութիւն քաղելու համար, և ո՛չ ապաքէն մեզ առ առաւելն անկ էր և վստել յարգիւնս ածել մեր զգացումն՝ րը, Եւ ահա այս զգացմամբ և ոգւով հաստատեցինք Հայ-
կա-ն-՝ Ուսումն-ը Եւ ինչ-ը, որ նպատակ ունի ազգային աղքատ պատանեկաց բարձրագոյն ուսմունքներ սովորեցնել տալ Եւրոպիոյ համալ-